

ՄԱՆՁՈՅ (???)

Ահա՛ ուրիշ հրէջ մը. մանչոց: Կերպ-նում որ մեր կաթնավաճառն անգամ այս-քան արտառոց բառ չի ճանչնար: Խոստովանիմ որ, երբ «ՄԱՆՁՈՅ վարժարան» բացատրութիւնը տեսայ՝ հաւատալս չե-կաւ. երեք անգամ աչքերս սեւեւեցի. ու վրաս մարելիք եկաւ: (Ժամանակ, 21. 2. 1955, էջ 4):

Հայերէն կ'ըսենք՝ մանչերու վարժա-րան: Ասկէ քառասուն տարի առաջ Սե-ւակ-ն ալ կը գրէր «մանչերու գերեզման»: Եթէ հիմա ողջ ըլլար, անշուշտ այդ լրա-դրին համար ալ պիտի գրէր հայերէնի գե-րեզման:

Միեւնոյն յօդուածին մէջ կը կարդանք. Պր. Թ. Թալմանեանի հեղինակած «Ամե-դութեան յաղթանակը» բիւլար: Ուղղէ՛ հայր Թաղեոս վրդ. Թովմանանի: Իսկ բիւս-ին նկատմամբ՝ Յունուարին գրած էինք:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐՆԻՍ...

«Յառաջ» ի խմբագիրը գայթակղեր է մեր դորձածած այս բառէն, եւ թրքարա-նութեան պիտակն ալ վրան փակցուցեր է: Կ'ուզէ որ ըսենք՝ մեր աշխարհաբար:

1952ին, Բազմավեպի մէջ (թ. 7-9, էջ 171-9), Ուսուցչապետ Յր. Յէյտի, մաս-նագիտական ուսումնասիրութիւն մը հրա-տարակեց «Յօդերը արեւմտեան հայերէնի մէջ» խորագրով, Փրանսերէն: Հոն, հը-մուտ Հեղինակը, արեւմտահայերէնի յօ-դերը վեց խումբի կը բաժնէ, այսպէս. 1) Որոշիչ յօդ (ն, ր): 2) Ստացական յօդ (ս, դ, ն/ր - նիս, նիդ, նին): 3) Օժան-դակ-ստացական յօդ: 4) Անճմական յօդ (ս, դ, ն/ր - նիս, նիդ, նին): 5) Օժան-դակ-անճմական յօդ: 6) Յուցական յօդ (ս, դ, ն/ր):

Մեր հարցը կը պատկանի երկրորդ խումբին: Օրինակ. աթոռ - աթոռ -

աթոռ, աթոռիս - աթոռնիդ - աթոռ-նին:

Պր. Յէյտի կը ստուգարանէ այսպէս. աթոռ+նի-ս, աթոռ+նու, աթոռ+նէ-ս: Ու կը հաւատայ, թէ արմատին եւ ա-դ-ն ստացական յօդերուն միջանկեալ մտնող նի մասնիկը՝ հաւաքական խմատ ունի, յօդնակիի նշանակութիւն: Դիմելով դրա-րարին՝ կը բերէ աւագանի բառը, զոր կը վերլուծէ աւագ-ա-նի. (այդ օրինակին վրայ կրնանք աւելցնել՝ կանանի, աղա-տանի):

Հետեւաբար թրքարանութեան պիտակը բոլորովին անհիմն եւ անտեղի կերպով դրուած է մեր դորձածած աշխարհաբար-նիս ձեւին վրայ: Կ'ընդունիմ թէ պէտք է խուսափել ծայրայեղութիւններէ. իրօք աններդաշնակ եւ տղեղ են արձաններնիս, արձաններնու, արձաններովնիս եւն... ձե-ւերը. բայց եղակիի մէջ, մանաւանդ ուղ-ղական կամ հայցական հոլովներով՝ կրը-նայ դորձածութիւն. յատկապէս՝ ընտանե-կան լեզուի մէջ:

Այսպէս կ'ըսենք. տուններնիդ գառէֆ, արտերնիդ մի՛ նեղէֆ, կոշիկնիդ հանեցէֆ, ձեռքերնիդ վե՛ր...: Ասոնք բոլոր թրքա-րանութիւններ են... Կարծեմ չափազան-ցութիւն է ասիկա:


Եւ եթէ ակնարկ մը տանք մեր ներկայ դրոշներուն, պիտի տեսնենք որ կը դոր-ձածեն այս նիս - նիդ - նին ձեւերը:

«Ինչո՞ւ մեղքերնիս պահեմք» կը գրէ Ե. Պ. «Նայիրի» մէջ (30. 1. 55, էջ 5, սիւն 2) լեզուական բնոյթ ունեցող յօդ-ուածի մը մէջ, ծաղրելով Արարատ օրա-դրին սխալագրութիւնները:

«Ինքզինքնին լաւատես համարող ուրիշ-ներ» կը գրէ Վարդան Գէորգեան (Նայի-րի, 23. 1. 55, էջ 1, սիւնակ 2):

Եզրակացութիւն. թրքարանութեան պիտակը ուրիշ տեղ փակցնելու է. յաջոր-դով եւ տեսնուինք:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ



ԲԺ. ԻՍԱՀԱԿ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ «Երկերի ժողովածու»: Չորս մեծադիր հատորներ (17.50×25), մեծատառ, ընդամենը շուրջ 2.000 էջ:

Երկար տարիներու բժշկական փորձա-նութենէ վերջ, Թեհրանահայ հեղինակը, որ արդէն մեղի ծանօթ է առողջապահա-կան երկերու հրատարակութեամբ (Մա-լարիան եւ նրա բժշկութիւնը, Ինչո՞ւ պի-տի չծխել, Սիֆիլիսը եւ նրա բժշկութիւնը եւն...), ամէնուն մատչելի կը դարձնէ իր օրագրի էջերը:

Գրական այս սեռը մեր մէջ մտցուց Սե-ւակ. դժբախտաբար հետեւող չունեցաւ:

Ա. հատորը, Փակ դռան յետեւ, 550 է-ջի մէջ կ'ամփոփէ 20 պատմուածք, որոնք ընդհանրապէս տխուր ու ցաւալի դրուաղ-ներ, ախտաւոր կեանքի սահմակցուցիչ տեսարաններ մ'ուրուագծեն իրապաշտ դոյներով. ախտաճոյներ հոն կը ներկա-յանան իրենց կարեկցելի վիճակով, սե-ռային ալլաւտեսակ ախտերով վարակուած խլեակներ կը գալարուին ցաւատանջ պրը-կումներով եւ հոգեմաշ սպառումներով: Յաճախ բժիշկը ինքն է որ կը բարձրացնէ այդ էակները՝ բարի խորհուրդներով եւ բուժումով, դժբախտաբար այդ ալ օգուտ չ'ունենար մերթ: Շատ անգամ ալ կը լու-սարանէ տղէտ ու խաւարամիտ անձեր՝ կեանքի առեղծոքածին շուրջ:

Պատմելու հաճելի, բնական եւ գրաւիչ ոճ մը ունի հեղինակը. գրականապէս մը-շակած եւ ընդլայնած է նիւթերը՝ հետա-քրքրական թեթեւ հանդուցներ ստեղծե-լով, մերթ հոգեբանական հակապատկեր-ներ դուրսնելով, երբեմն ալ կեանքի դուարթ եւ դեղեցիկ դոյները ցայտեցնելով:

Նոյն ուղղութեամբ կը շարունակուի Բ. հատորը, համանուն տիտղոսով. 449

էջ, 16 պատմուածք: Ուսուցանող խրա-տական տարրը աւելի շեշտուած է հոս, ինչ որ ճնշիչ տպաւորութիւն կը թողու, քիչ մը ձանձրացնելու աստիճան:

Ժողովածուին Գ. հատորը, Ուխտած-ները (405 էջ) 20 պատմուածքներով կը ներկայացնէ հեղինակին ինքնակենսա-դրութիւնը, Ղարաբաղէն Բագու, Թիֆ-լիս, Դորպատ, Հայաստան. հոն կը պատ-կերանայ աշակերտը, յեղափոխականը, համալսարանականը, բժիշկ զինուորակա-նը: Ղարաբաղի հերոսամարտին յիշա-տակով կը փակուի հատորը, ուր կան հե-տաքրքրական էջեր՝ պատմական անձերու հետ փոխ յարաբերութիւններու նկատ-մամբ: Չեն պակսիր տեսարանական հատ-ուածներ, հասունագոյն հասակի մը վե-րագրելի խորհրդածութիւններով խառն. արդիւնք՝ վերամշակումի:

Գ. հատորը կու դայ լրացնելու առա-ջին երկուքը, Կիւն ԵՒ ՏՂԱՄԱՐԴԸ տիտ-ղոսով. 580 էջերու մէջ կը ներկայացուին Սէրը - ամուսնութիւնը - սեռական առող-ջապահութիւնը - կնոջ եւ տղամարդու ներքին աշխարհը: Գլուխներու եւ ենթա-լիւններու միջոցով տակ, լոկ ուսուցչական ամպիրոնէ կը խօսի հեղինակը: Փորձառա-կան փիլիսոփայութիւնը, վիճակագրու-թիւններու բազմազան տուեալները, բը-ժշկութեան դարաւոր յայտնութիւնները դուռ կը բանան բարոյական նկատողու-թիւններու, բացատրութիւններու:

Դժբախտաբար հեղինակը կը յայտնուի նիւթապաշտ ըմբռնումով մը՝ կեանքին հանդէպ, ու կը պոռթկայ թոյն մը քրիս-տոնէական կարգ մը սկզբունքներու դէմ: Քրիստոսն իսկ կը ներկայացնէ իր սովո-րական մարդ, նախապաշարեալ մէկը. նամանապէս Պօղոս Առաքեալը՝ իրրեւ կնա-տեաց մը: Նոյն տեւ ակնոցով կը քննա-դատէ ուրիշ եկեղեցական գրիչներ ու Ս. Հայրեր: Տարուինեան փիլիսոփայութեան մթնոլորտի մէջ սնած է հեղինակը, որ մարդկային կեանքի հոգեկան - մտաւոր -

Փրդիքական բոլոր երեւոյթները կը վերածէ ու կը վերադրէ հուսկ սեռային բնադրին (էջ 405): Չարազանցութիւն մը եւ յայտնի սխալ մըն է ասիկա եւ հակառակ ողջամբող տրամաբանութեան. նիւթին եւ հոգեկանին էական տարբերութեամբ ամենեւին չի զբաղիր հեղինակը:

Գրախօսականի մը հակիրճ տողերը չեն թոյլատրեր մեզի զբաղելու ատենց մանրամասն հերքումով: Կը ցաւինք սակայն յայտարարելու՝ որ բժիշկ Իս. Տէրտէրեան անտեղեակ է քրիստոնէական բարոյականի էական տարբերուն. այսպէս կ'անդիտանայ թէ քրիստոնէութիւնը ինչքան աղնուացուցած է սէրը, եւ ամուսնութիւնը բարձրացուցած է նուիրական ու շնորհաբեր Ս. Խորհուրդի մը, տալով անոր աստուածային դրօշմ: Ըստ Տէրտէրեանի, այսպէս չէ եղած քրիստոնէութեան սկիզբները, այլ՝ յետ երկար փորձառութեան, Եկեղեցին անդրադարձ է «մի օր էլ պսակը յայտարարել սուրբ» (էջ 395). ինչ որ յայտնի սխալ է, վասնզի ամուսնութեան խորհուրդին հիմնադիրն է Քրիստոս, ըստ Ս. Աւետարանին: Եւ իրականին մէջ, եկեղեցական առաջին զրիչները ո՛չ թէ կնատեաց են եւ ամուսնութեան դէմ կը պայքարին, այլ կը մաքառին ապօրինի, անկարգ եւ անառակ սիրոյն, եւ անոր հետեւանքով ծնած՝ ցոյի եւ հեշտակեաց արարքներու դէմ, որոնք մնացորդներն էին հեթանոսութեան աղտեղի զաղրութիւններուն:

Բժ. Տէրտէրեան իր մարդէն դուրս է ելեր այս հարցերու քննութեան մէջ. հարցեր՝ որոնք բժշկական ընդունարանի մը կամ վիրաբուժական սրահի մը մէջ չէ կարելի ուսումնասիրել, ինչպէս չէ կարելի փորձառապէս տեսնել հոգեպաշտ փրկութեամբ թափանցած բոլոր եզրակացութիւնները:

~ ~ ~

ԾԱՏՈՒՐ ՊԵՐՊԵՐԵԱՆ. — Խաչին նամբան: Դրուագներ 1915-1925: Փարիզ, տպ. Տէր Յակոբեան, 1955, էջ 166:

Եթէ չենք սխալիր, 1955ի առաջին զիւրքն է, ձօնուած մեծ աղէտի քառասնամեակին: Հեղինակին ալ անդրանիկ երկը: Տարադրութեան եւ չարչարանքի վկայ մը ինքն ալ, ինչ աւելի արժէքաւոր նուէր կրնար տալ իր մարտիրոս ժողովուրդին:

Տասնեութը պատմութեան քննարկ, ուր կը դժուին կմախացեալ պատկերները սովորած ու տանջուած հայորդիներու, խոշտանգուած կոյսերու, մերկ ու բոլորիկ որբուկներու. բայց նաեւ հերոսութիւն մայրերու եւ վրիժառու հայրերու: Թատերաբեմը այս ողբերգութեան՝ Խարբերդն ու Փոքր Ասիան է:

Գրական ոճ կամ մշակում աւելորդ է փնտռել այս հատորին մէջ: Պարզ, բնական եւ ինքնաբերական պատկերներ են: Հեղինակն ալ շատ համեստօրէն եւ առանց յաւակնութեան, կը հրատարակէ զայն իրեն առաջ, իրեն մէկ էջը այն արիւնոտ անցեալին, զոր ապագայ վիպագիրը պիտի հրատարակէ Մեծ Եղեռն անունով: Եւ անշուշտ պիտի չուանայ այդպիսի կարեւոր հատոր մը, յաջորդ տասնամեակի ընթացքին, բաղմամբ աշխատակիցներու կազմակերպութեամբ:

Գեղեցիկ է կողքին նկարը. վարդապոյն խորքի մը վրայ, կարմիր ուղի մը. աջակողմը՝ կիսաքանդ սիւններ, որոնց ստուերները խաչեր կը դնեն ճամբուն վրայ. ճախին՝ նոճիներու շարք մը. բոլորը կը հեռանայ ու կ'անհետի խորութեան մէջ: Նկար՝ Մ. Քէլապաճեանի: Ապրիլեան խորհուրդին արժանաւայել պատկերացում մը:

Կը սպասենք Հեղինակին հրատարակելի յաջորդ տասը երկերուն:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԳԱՀ ՎՍԵՄ. ԲԱՍԻԼ ԵԱՍՈՐԵՆ

Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՁ

(28 ՄԱՐՏ 1955)

Լիբանանի Հանրապետութեան Նախագահը, Մարտի վերջերը, պաշտօնական այցելութեամբ պատուեց Խաչիոյ կառավարութիւնը: Հոմի ու Վատիկանի չքեղ ընդունելութիւններէն վերջ, իր այցելութիւններու զլսաւոր հանգրուաններն եղան Ֆիրենցէ, Վենետիկ ու Միլան:

Մարտ 27ի իրիկունը, բաղմամբ հետեւորդներով՝ կու գար ողջունելու Ազրիականի հինաւորեց Դիւան: Քաղաքական ու եկեղեցական անձնաւորութիւններու կարգին, կայարան փութացած էր նաեւ Միաբանութեան Ընդհ. Արհասայրը, հետն ունենալով քանի մը վարդապետներ, Մուրատ-Ռափայէլեան վարժարանի Տեսչութիւնն ու աշակերտները, ներկայացնելու համար բարի դալուստի շնորհաւորութիւններն ու մեծարանքի առաջին ցոյցերը:

Յաջորդ առաւօտ կանուխ (Մարտ 28) ծայր տունին այցելութիւնները: Ու նախ Դիւանի չքեղ պալատը, Ս. Մարկոսի տաճարը եւ դիւթիչ հրապարակը: Այս շոգեմակոյկով առաջին պտոյտը լճակին վրայ, դէպի Ս. Դաղար: Առաւօտեան ժամը 11ն էր:

Ընդհանուր ողբերգութեան, հանդիսաւոր զօղանջներու եւ ծափողջոյններու մէջ՝ Միաբանութեան հայ հոգին վրայ կը կոխէր Վսեմ. Նախագահը իր ազնիւ Տիկնոջ հետ. կը հետեւէին Լիբանանի Արտաքին Գործերու Նախարար՝ Պր. Ալֆրէտ Նաքբաշ եւ Տիկնիւր, Ելեմուտի Նախարար՝ Պր. Մուհիթտին Նսուրի եւ Տիկնիւր, Հանրապետ. Նախագահութեան Դիւանապետ՝ Պր. Ժօրժ Հայմարի, Նախարար Լիպոթ՝ Պր. Նիքոլա Պուսթրոս, Մամուլի Ընկերութեան Նախագահ՝ Պր. Ռոպէր Ապէլա, Գնդապետ Լապաքի, Տեղակալ Տէրմիշ, Օր. Ռոպա Մաթար՝ քարտուղար Տիկնի Շամունի, եւ ուրիշներ, կազմելով գեղե-



Վսեմ. Քաւիլ Շամուն, իր ազնիւ Տիկնիւր, Ուստիս Գերայ. Արքայադուռ, բարձրատիպան Հիւրերը՝ Վսեմի մուտքին, ծաղկազարդ Սոգումնեան սրահին մէջ:

ցիկ շքախումբ մը, քանի չափ անդամներով:

Գերպոճ. Արքայադուռն ու բոլոր Հայերը իրենց յարգալի մեծարանքը կը ներկայացնէին, մինչ հանդիսաւոր թափօրը կը մտնէր վանքի սեմէն ներս: Սիւնազարդ քառանկիւն իր դիւթական պարտէզով կը զրաւէր իսկոյն բոլորին ուշադրութիւնը: Ի տես լիբանանեան հակայ ու թեւատարած մայրիկին՝ Տիկ. Շամուն կը զոչէր ժպտալին. «Ուրեմն փոքրիկ Լիբանան»